

ի մայրաքաղաքն Կ. Պօլս» (*) : 2. **Մեկնութիւն Նրզոց Նրզոյն** (նեղինակ Էրզրումցի Խաչատուր վրդ.) : — Տպագրիչի անուն չկրող գիրքերէն կան նաեւ **Խոստովանարան կամ Ամբաստանարան** (1701), Խոսկերէնէ բրգմ. Կ. Պօլսցի Յովն. վրդ. : — **Ճառաց գիրք փոքրագունեղ** (1732) : — **Շահաւէս** (Պաղտասար Դպիրի) 1750, ևն. :



26.^բ **Տպ. Ա. Էջմիածնի եւ Ա. Արագսի Ծորավարի.** —

Խոսկիոյ Լիփօնօ քաղաքէն Պօլս փոխադրուած է այս տպարանը . պարագայ մը որ կը հաստատուի արդէն նոյնութենէն Ոսկան վրդ.ի տառերուն և պատկերներուն , մանաւանդ որ գերման հայագետ Շրեյտեր ևս նոյնը կը վկայէ : Այդ միջոցին «Չնչին բանասէր» ծածկանուամբ գիրքեր հրատարակող Միխրար վրդ.ի (ապա Աբրահայր) տեսչութեանը տակ , Ֆերա կը գրուէր համանուն տպարանս՝ ուրկէ 1700 ին յոյս ընծայուած են **Գիրք մեկնութեանց յայնացութեանց Սրբոյ Յովնաննու Աւետարանչի** (Լատիներէնէ բրգմ. Թիֆլիզցի Պետրոս վրդ.), **Հանդերձ Աստուծով, Գիրք յարութեանց** (նորավարժ տղոց ջերական՝ որ 1712 ին վերստին դրոշմուած է) : Դարձեալ , 1701 ին այս տպարանը տպուած է **Բանալի ջերմեռանդակեօք** (Լատիներէնէ բրգմ. Թիֆլիզցի Պետրոս վրդ.), Ա. տիպ :



32. **Մհա. Աստուածատուր Դպիր.** — Պօլսոյ մէջ գործող հայ տպարանագետներէն միակն է ինք որ ամենաբնղուն գործունէութիւն մը ցոյց տուած է . իր շատաւիղներն անխտոր կերպով միեւնոյն ճամբէն քայլած են որդւոց որդի , իրենց տպագրած բազմաթիւ գիրքերով ընթերցասէր Հայուրիւնը կշտացունելով և տարուէ տարի ծաղկեցունելով նոյն արուեստը՝ մինչև իրենց գերդաստանին վերջնական ամլութիւնը : Աստուածատուր , իր զաւակը , բոռը , բոռնորդիները , նաեւ բոռանը բոռները **մէկ ու կէս դար** տպարաններին և ձուլարաններին անխտոր շարունակած են յաջորդարար : Այսպէս 1. ՄՀՏ. ԱՍՏՈՒԱՅՐԱՍՈՒՐ (1700-50) : 2. Տիրացու կամ Չնչին ՅՈՎ.ՀԱՆՆԷՍ (1746-76) զաւակը : 3. ՅՈՎ.ՀԱՆՆԷՍ ԵՒ ՊՂՂՈՍ ԱՍՏՈՒԱՅՐԱՍՈՒՐԵԱՆ (1777-90) զաւակ և բոռ : 4. ՊՂՂՈՍ ՅՈՂԱՆՆԷՍԵԱՆ Պօլս (1799-1819) բոռը : 5. ՊՂՂՈՍ ԱՐԱՊԵԱՆ ԱՊՈՒՉԵԽՅԻ Օրբաքէօյ (1820-35) , միեւնոյն անձը՝ մականունը փոխած : 6. Տպարան ԵՐԻՅ ՈՐԳԻՈՅ ՊՂՂՈՍԻ ԱՐԱՊԵԱՆ (Աստուածատուր , Գեորգ , Դպրոստ) Օրբաքէօյ (1836-53) , բոռնորդիները : 7. ԱՐԱՊԵԱՆ ԵՂԵԱՐԲ Պօլս (1855) , նոյնք : 8. ՅԱՐՈՒԹԻԻՆ ԵՒ ԽԱՉԻԿ ԱՐԱՊԵԱՆ Օրբաքէօյ , բոռանը բոռները , մինչև վերջին ատեններս գրաշար և գրաձուլիչ : Թուականի կարգաւ պիտի անդրադառնանք իւրաքանչիւրին տպարանական գործունէութեան , 50Ա, 50Բ, 51Ա, 51Բ և 52 բուհամարներով : — Ինչպէս ըսինք , Մհա. Աստուածատուր իր տպարանը 1700 ին հիմնելով՝ 50 տարի յարատեւօրէն բանեցուցած է զայն , մինչև իր մահը որ 1750 ի մօտերը պատահած ըլլալ կը կարծուի : Կենդանութեանը , զաւակը Տիրացու Յովնաննէս գործակցած է իրեն , և մահէն վերջ բաւական տարիներ երախտագէտ որդին **ի ռպարանի հանգուցեալ Աստուածատուրի** բանաձեւը պահած է իր դրոշմած գիրքերուն վրայ : — Հետաքրքրական է բարբախիլ հիմնադիրին և իր յաջորդներուն յոյս ընծայած գրեանց Յիշատակարաններուն մէջ՝ իմանալու համար իրենց գերդաստանին հին ու նոր անդամները , տպարանին եւրոկիացի , Վանցի ևն. բանօրները՝ զանազան համեստունակ կամ դրուատալից մակդիրներով : Այդ Յիշատակարաններէն շատին ընթերցումն էր անա որ մեր միակ առաջնորդը եղաւ՝ ուրուագծելու նահապետական այս օրհնեալ ընտանիքին ազգագրութիւնը , բոյորն ալ սիրով ու եռանդեամբ նուիրուած տպագրութեան արուեստին և փայլած իբր տպարանագետ , գրաշար , «տպագրիկ» , «մրահար» , գրաձուլիչ ու հրատարակիչ : Դադալար մը տալու համար քե Ած.ատուրի ձերութեան օրերուն՝ ի՛նչ մեծ

(*) **Նրզախան** անուամբ ոգոցմէի գիրքին Ա. տիպը յոյս տեսած է 1668ին Ամսթերսամ , Բ. եւ Գ. տիպ Վենետիկ (1678-96) , Ե. տիպ Մարտիլիա (1709) եւն. եւն. :